ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

ՀՀ ԱԺ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Մենք՝ Հայաստանում գործող զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներս,

- հաշվի առնելով վերջին տարիներին ընտրությունների և հանրաքվեների լուսաբանման մոնիտորինգների ընթացքում արձանագրված բացասական երևույթները,

- հիմք ընդունելով ՀՀ Ընտրական օրենսգրքի՝ լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող հոդվածները, ինչպես նաև՝ «Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի» 7-րդ՝ «Ազնվություն ընտրությունները և հանրաքվեները լուսաբանելիս» բաժնի և դրա հիման վրա Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի մշակած ընտրությունների և հանրաքվեների լուսաբանման ուղեցույցի դրույթները,

- հաշվի առնելով նաև Հայաստանի համար արտահերթ խորհրդարանական ընտրությունների կարևոր նշանակությունը և դրանց լուսաբանման գործում լրատվամիջոցների բացառիկ դերը, ինչպես նաև արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակաշրջանի կարճ լինելը,

- կարևորելով ընտրողների իրավունքների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դաշինքների ծրագրերի ու ընտրարշավի վերաբերյալ հանրության իրազեկված լինելը՝

ընդունում ենք 2021թ. հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների լուսաբանման սույն Հուշագիրը:

Ա. Մենք պարտավորվում ենք ընտրություններ նշանակելու օրվանից մինչև նախընտրական քարոզչության ժամանակաշրջանի սկիզբը՝

- գործել Ընտրական օրենսգքով նախընտրական քարոզչության ժամանակաշրջանի համար նախատեսված կարգավորումներով, պահպանել ընդունված էթիկական սկզբունքները,

- ձգտել, որ կուսակցությունների, դաշինքների և թեկնածուների վերաբերյալ տեղեկությունները չվերածվեն թաքնված քաղաքական գովազդի,

- հնարավորինս սահմանափակել կուսակցական գործիչների ոչ քաղաքական, այսինքն՝ մասնագիտական գործունեության կամ պաշտոնական պարտականությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների տարածումը, եթե այդ տեղեկությունները հանրային նշանակություն չունեն:

Բ. Պարտավորվում ենք նախընտրական քարոզչության շրջանում՝

- բոլոր կուսակցությունների, դաշինքների նկատմամբ լինել հանդուրժող,

- խմբագրության պատրաստած նյութերում չվիրավորել թեկնածուներին,

- քարոզարշավի լուսաբանման լրատվական նյութերում չծաղրել ընտրությունների մասնակիցների հայացքներն ու տեսակետները,

- հարցազրույցների ժամանակ բոլոր հյուրերին հավասար և անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերել,

- հետագա շահարկումներից խուսափելու նպատակով՝ նախընտրական հարցազրույցի կամ բանավիճային հաղորդման հյուրերին հրավիրել գրավոր նամակով, ակնկալելով, որ համաձայնությունը կամ մերժումը նույնպես կստացվի գրավոր,

- ուղիղ հեռարձակումներից առաջ զրուցակիցներին նախապես զգուշացնել՝ զերծ մնալ մրցակիցների կամ երրորդ անձանց հասցեին վիրավորական, ծաղրական արտահայտություններից, շանտաժից և սպառնալիքից,

- նախընտրական ծրագրերը և ընտրությունների մասնակիցների գործունեությունը վերլուծելիս հիմնվել միայն ստուգված և հավաստի փաստերի և տեղեկությունների վրա, չառաջնորդվել համակրանքներով ու հակակրանքներով,

- պատասխանի և հերքման հնարավորություն ընձեռել օրենսդրությամբ նախատեսված ժամկետում և կարգով,

- բոլոր մասնակիցներին իրենց ծրագրերը և տեսակետները ներկայացնելու համար հավասար հնարավորություն տալ, վճարովի տեղ կամ եթերաժամ հատկացնելիս՝ ապահովել հավասար սակագնային պայմաններ,

- չհրապարակել քողարկված քաղաքական գովազդ պարունակող նյութեր,

- այս կամ այն կուսակցությանը կամ թեկնածուին աջակցող խմբերի կողմից հրապարակման ներկայացված (վճարովի կամ անվճար) կամ նրանց պատվերով պատրաստված նյութերը հստակ առանձնացնել այլ նյութերից և այդ մասին նշում կատարել,

- հեռուստահաղորդումների ժամանակ (ռեպորտաժ, հարցազրույց, բանավեճ, թոք-շոու և այլն) տեխնիկական գործիքները, վիզուալ հնարքները օգտագործելիս ցուցաբերել հավասար, միատեսակ և անկողմնակալ մոտեցում,

- լուսանկարներում և տեսանյութերում տեխնիկական միջամտությունների դեպքում անպայման նշել այդ մասին, ձգտել, որ այդ միջամտությունները չաղավաղեն լուսանկարային կամ տեսագրված նյութի բովանդակությունը,

- պաշտոնյաների աշխատանքային կամ պաշտոնական այցերը լուսաբանելիս հնարավորինս ընտրել այնպիսի կադրեր կամ լուսանկարներ, որոնցում չեն երևում կուսակցական խորհրդանիշներով պաստառներ,

- իրարից լրատվական սյուժեներ վերցնելիս նշել սկզբնաղբյուրը և ձգտել ուղեկցող տեքստը պատրաստել ինքնուրույն,

- լուսաբանումների հավասարություն ապահովելու նպատակով, խուսափել նախկինում պատրաստած այնպիսի ռեպորտաժների, գեղարվեստական և փաստագրական ֆիլմերի հեռարձակումից, որտեղ կա կուսակցություններին անդրադարձ, կամ որտեղ ցուցակներում ընդգրկված քաղաքական գործիչները հայտնվում են կադրերում՝ թեկուզ և ոչ քաղաքական գործունեությամբ կամ դերակատարմամբ,

- զգուշավորություն ցուցաբերել աղբյուրը չբացահայտելու պայմանով մեզ տրամադրվող, ինչպես նաև նույնականացման տվյալներ չունեցող համացանցային աղբյուրների նյութերը հրապարակելիս, մանավանդ, եթե դրանք կպարունակեն ընտրություններին մասնակցող կուսակցություններին, դաշինքներին և/կամ թեկնածուներին, ընտրական հանձնաժողովների անդամներին վարկաբեկող տեղեկություններ կամ արտահայտություններ, հիշել, որ հրապարակելու դեպքում պատասխանատվությունը կրում է լրատվամիջոցը,

- սոցիալական ցանցերի օգտատերերի գրառումները օգտագործելուց առաջ անպայման ճշտել դրանցում եղած տեղեկությունները այլ՝ իրազեկ աղբյուրներից ևս, իսկ եթե չի հաջողվում ճշտել, սակայն տեղեկությունները հանրային նշանակություն ունեն, ապա հրապարակման մեջ անպայման նշել այդ մասին,

- հետևել, որ լրատվամիջոցի, ինչպես նաև նաև սոցցանցային էջերի հրապարակումների մեկնաբանություններում չլինեն կուսակցությունների, դաշինքների և թեկնածուների հասցեին ակնհայտ վիրավորական, վարկաբեկիչ արտահայտություններ, ատելության խոսք, այդպիսիք հայտնաբերելու դեպքում հեռացնել դրանք կամ ձեռնարկել իրավիճակից բխող այլ քայլեր։

Մենք մեզ իրավունք ենք վերապահում հեռացնել ցանցային հարթակներում մեկնաբանության հնարավորություններն օգտագործող, սակայն մեր հրապարակման հետ կապ չունեցող, կուսակցությունների, դաշինքների, թեկնածուների քարոզչություն պարունակող գրառումները։

Հեռարձակվող լրատվամիջոցներս ձեռնպահ կմնանք որևէ կոնկրետ թեկնածուի կամ կուսակցության աջակցելուց, իսկ տպագիր և առցանց լրատվամիջոցներս՝ նման մտադրություն ունենալու դեպքում այդ մասին նախապես և հստակ կհայտարարենք:

Գ. Պարտավորվում ենք լռության և քվեարկության օրը՝

- չտարածել և չհեռարձակել նյութեր՝ կուսակցական գործիչների կամ ցուցակներում ընդգրկված պետական պաշտոնյաների վերաբերյալ, եթե տեղեկությունը հանրային նշանակություն չունի, իսկ եթե հնարավոր չէ խուսափել դրանից, ապա լուսաբանումը սահմանափակել տեղեկատվական ոճով,

- չհրապարակել որևէ նոր նյութ, որը պարունակելով տեղեկություններ ընտրությունների մասնակից կուսակցությունների և թեկնածուների վերաբերյալ, կարող է ընկալվել իբրև քարոզչություն,

- կայքերում առաջ չմղել նախորդ օրերին հրապարակված քարոզչական կամ նախընտրական քարոզչությանը վերաբերող նյութերը՝ դրանք թողնելով հրապարակման տեղում, եթե կայքում, ամենաընթերցված լինելու հանգամանքով պայմանավորված, դրանք ինքնաբերաբար առաջ չեն մղվում,

- հնարավորինս խուսափել ուղիղ եթերով հարցազրուցներից ու հարցումներից, որպեսզի խոսակցի որևէ անզգույշ արտահայտություն, ակամա արտասանած բառ կամ թույլ տված վրիպում չդիտարկվի քարոզչություն և օրենքի խախտում,

- բարձրաստիճան պաշտոնյաների քվեարկությունը լուսաբանելիս և՛ տեքստում, և՛ լուսագրերում նրանց ներկայացնել իրենց պաշտոնով, այլ ոչ թե կուսակցական պատկանելությամբ կամ կուսակցական ցուցակի համարով և հնարավորինս ընտրել այնպիսի կադրեր, լուսանկարներ, որ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, դաշինքների կամ թեկնածուների պաստառներն ու խորհրդանիշները չերևան,

- դիտորդի հետ հարցազրույցում հստակ նշել, թե որ կազմակերպությունից է հավատարմագրված,

- քվեարկությունը լուսաբանող լրագրողներին հորդորել, որ ընտրատեղամասում բանավեճերի մեջ չմտնեն հանձնաժողովի նախագահի, անդամների, դիտորդների, վստահված անձանց, քվեարկողների հետ, չմիջամտեն ընտրական գործընթացներին,

- լրագրողների օրինական մասնագիտական գործունեության խոչընդոտումների վերաբերյալ անմիջապես իրազեկել հանձնաժողովի նախագահին, իրավապահ մարմիններին, ԿԸՀ-ին և հանրությանը:

Դ. Պարտավորվում ենք հետընտրական գործընթացները լուսաբանելիս՝

- առաջնորդվել նույն կանոններով, առավելություն չտալ ընտրությունների արդյունքները բողոքարկողների կամ դրանք ընդունողների տեսակետներին,

- անկողմնակալ լուսաբանել ընտրությունների արդյունքների բողոքարկման դատական գործընթացները,

- ընտրախախտումների վերաբերյալ ցանկացած հայտարարություն հրապարակելիս նշել աղբյուրները, հարկ եղած դեպքում ստանալ նաև ընտրական հանձնաժողովների, դիտորդների և վստահված անձանց բացատրությունները:

Ստորագրելով սույն Հուշագիրը՝ մենք ընդունում ենք Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի իրավասությունը՝ բողոքների դեպքում քննելու մեր լրատվամիջոցների և դրանք ներկայացնող լրագրողների վարքի համապատասխանությունը Հուշագրին և պատրաստակամ ենք հրապարակելու Դիտորդ մարմնի եզրակացությունը:

Ընդունվել է 2021թ. մայիսի 15-ի կայացած՝ Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած ԶԼՄ-ների ղեկավարների և լրագրողական կազմակերպությունների ներկայացուցիչների ժողովում:

Հուշագիրը բաց է ստորագրման համար: